



## 1000 խոշոր հարկատուների կողմից 2022թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի վերլուծություն

2022թ. 1000 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է շուրջ 1,5 տրլն դրամը, ինչը 32%-ով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (գծապատկեր 1): 2022թ. մակարդակն անհամեմատ բարձր է ոչ միայն 2021թ., այլ նաև դրան նախորդող, այդ թվում՝ տնտեսական առումով առավել բարենպաստ կամ միևնույն ժամանակահատվածի նկատմամբ:




Գծապատկեր 1. Հունվար-դեկտեմբեր ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2022թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին, նախորդ տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ, Էական փոփոխություններ են արձանագրվել նաև 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության պարագայում: Այսպես, 2022թ. 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել 374 մլրդ դրամ հարկ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ ավելի է 98 մլրդ դրամով (գծապատկեր 2): Նույն կերպ, ավելի քան 210 մլրդ դրամով կամ 32 տոկոսով ավելացել է հարկային վճարումների ընդհանուր ծավալը 100 խոշոր հարկատուների պարագայում:



**Գծապատկեր 2. Հունվար-դեկտեմբեր ամիսներին 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ**

2021-ի համեմատությամբ ավելի քան 30% ավելացում է արձանագրել 1000 խոշորագույն հարկատուների ցանկի վերջնամասում տեղ զբաղեցնող ընկերությունների կողմից վճարված հարկերի մեծությունը: Այսպես, ցանկի վերջին հարյուրակում գտնվող հարկատուների վճարումները 2022թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին կազմել է 27,8 մլրդ դրամ՝ 2021-ի 17,1 մլրդ դրամի փոխարեն (գծապատկեր 3):




**Գծապատկեր 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 փոքրագույն հարկատուների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ**

1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2022թ.




## Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՅԿ

համար կազմել է 32 անգամ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ էականորեն ցածր է: Առաջին և վերջին տասնյակի հարկատուների վճարած հարկերի հարաբերակցությունը 2022-ին 144 անգամ է, ինչը ևս զգալիորեն ցածր է, քան նախորդ տարում գրանցված հարաբերակցությունը (գծապատկեր 4):



**Գծապատկեր 4. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 խոշորագույն և փոքրագույն հարկատուների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի հարաբերակցությունը, անգամ**


2022թ. արդյունքներով ՀՀ-ում գործող 258 ընկերությունն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2021-ին այդպիսի հարկատուների թիվը 201 էր, 2020-ին՝ 177, իսկ դրան նախորդող տարիներին՝ էլ ավելի քիչ: Նույն կերպ, 2022-ի հունվար-դեկտեմբեր ամիսների արդյունքներով, ցանկում ներառված հարկատուների կեսից ավելին՝ 543 սուբյեկտ, վճարել է 500 մլն դրամը գերազանցող ընդհանուր գումարով հարկեր: Նախորդ տարվա արդյունքներով այդպիսի հարկատուների թիվը 409 էր:



**Գծապատկեր 5. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված հարկատուների թվաքանակը՝ ըստ հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի մեծության**

2022թ. արդյունքներով, խոշոր հարկատուների ցանկում ներառված չէ որևէ հարկատու, որի վճարած հարկերի ընդհանուր մեծությունը չի գերազանցում 200 մլն դրամը, մինչդեռ նախորդ տարի ցանկում ներառվել էր 142 այդպիսի սուբյեկտ, իսկ օրինակ, 2020թ.դրանց թիվն էլ ավելի մեծ էր՝ շուրջ 200 (գծ. 5): Ավելին, 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառվելու համար 2022թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին պետք էր վճարել ավելի քան 261 մլն դրամի հարկ, այն դեպքում, երբ 2021-ին կամ 2020-ին ցանկում ներառվելու համար բավարար կլիներ 157 մլն դրամի չափով հարկային պարտավորությունների կատարումը:

2022-ի հունվար-դեկտեմբեր ամիսների արդյունքներով, ՀՀ-ում 160 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 200 մլն դրամը, նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 124 էր, իսկ օրինակ 2020-ին՝ 116: Նույն կերպ, 280 հարկատուի վճարած եկամտային հարկի մեծությունը գերազանցել է 200 մլն դրամը, նախորդ տարվա համեմատությամբ այսպիսի հարկատուների թվաքանակը ավելացել է 45-ով (գծապատկեր 6):




**Գծապատկեր 6. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված շահութահարկի և եկամտային հարկի մեծության**

Մեկ այլ կարևոր միտում է 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի ավելացումը՝ Նախորդ տարվա համեմատ, սակայն վերջին 4 տարիների միտումը նվազման ուղղվածություն ունի: 2022թ. 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 28,7%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը 23,6% էր (գծապատկեր 7):

1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունների հարկային վճարումների ընդհանուր մեծության 25,8%-ը ուղղակի հարկերն են ինչը ցածր է Նախորդ մի քանի տարիների մակարդակից:




**Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ**



**Գծապատկեր 7. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում, %**

2022թ. 12 ամիսների արդյունքներով, 81 հակատուի ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 1 մլրդ դրամը: Նախորդ տարի այդպիսի հարկատուների թիվը 61 էր, իսկ 2020-ին՝ 63:

2022թ. 200 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 409 սուբյեկտներ, 2021-ին հանրապետությունում գործել է 347 այդպիսի հարկատու (գծապատկեր 8):



**Գծապատկեր 8. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի մեծության**



**Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ**

Այսպիսով, 2022թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում 1000 հարկատուների ցանկի առաջին հարյուրակում տեղ զբաղեցրած միջին վիճակագրական հարկատուի՝ ՀՀ պետական բյուջե կատարված հարկային վճարումների կազմն ու կառուցվածը որոշակիորեն տարբերվում է նախորդ տարիների պատկերից (աղյուսակ 1):

**Աղյուսակ 1. Ցանկի առաջին հարյուրյակի միջին վիճակագրական հարկատուի վճարած հարկերը**

	2018	2019	2020	2021	2022
<b>Ընդամենը, մլրդ դրամ</b>	5.8	6.4	5.9	6.7	8.8
<b>Շահութահարկ, մլն դրամ</b>	1054	1080	805	711	1100
<b>Եկամտային հարկ, մլն դրամ</b>	892	1037	990	1090	1163
<b>ԱԱՀ, մլրդ դրամ</b>	2.4	2.58	2.4	2.7	3.4
<b>Ակցիզային հարկ, մլն դրամ</b>	800	980	970	820	970

Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2022-ի արդյունքներով վճարել է 8,8 մլրդ դրամի հարկ (2021-ին՝ 6,7 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 1,1 մլրդ դրամ (2021-ին՝ 711 մլն դրամ), եկամտային հարկը՝ 1,16 մլրդ դրամ (2021-ին՝ մոտ 1,1 մլրդ դրամ), ԱԱՀ-ն՝ 3,4 մլրդ դրամ (2021-ին՝ 2,7 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 970 մլն դրամ (2021-ին՝ 820 մլն դրամ):

**Աղյուսակ 2. Ցանկի վերջին հարյուրյակի միջին վիճակագրական հարկատուի վճարած հարկերը, մլն դրամներով**

	2018	2019	2020	2021	2022
<b>Ընդամենը</b>	148.0	177.0	166.0	171.0	278.0
<b>Շահութահարկ</b>	19	22	20	22	-20
<b>Եկամտային հարկ</b>	41	47	52	56	78
<b>ԱԱՀ</b>	70	84	80	68	123
<b>Ակցիզային հարկ</b>	6	4.4	4.8	7.3	3.6


Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2022թ. 12 ամիսների արդյունքներով վճարել է մոտ 280 մլն դրամի հարկ (2021-ին՝ 170 մլն դրամ), եկամտային հարկը՝ 78 մլն դրամ (2021-ին՝ 56 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 123 մլն դրամ (2021-ին՝ 68 մլն դրամ):

Դիտարկվող ժամանակահատվածում նշանակալի կերպով փոխվել է նաև ցանկում ներառված հարկատուների տարածքային բաշխվածությունը: Այսպես, Երևանում գրանցված հարկատուների թիվը ցանկում ներառվածների 81%-ն է, ինչը նախորդ տարիների համեմատությամբ փոքր-ինչ ավելացել է: Մինչդեռ նրանց մասնաբաժինը



## Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ

վճարած հարկերի ընդհանուր ծավալում 2022-ին կազմել է 74,8%, ինչը նկատելիորեն ցածր է նախորդ տարիների մակարդակից (գծապատկեր 9):



### Գծապատկեր 9.Երևանի մասնաբաժինը, տոկոսներով

Աղյուսակ 3-ում ներկայացված է 1000 հարկատուների ցանկի վերին հորիզոնականներում (հիմնականում՝ առաջին հարյուրյակում) տեղ զբաղեցրած մի շարք կազմակերպությունների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության դինամիկան 2021-2022թթ. ընթացքում: Ընտրված՝ հարյուրից ավելի կազմակերպությունների շուրջ 80%-ը նախորդ տարվա համեմատությամբ ավելացրել է վճարած հարկերի մեծությունը: Ընդ որում, հարկատուների շուրջ 60%-ը նախորդ տարվա համեմատությամբ հարկային վճարումների ծավալն ավելացրել է 20 և ավելի տոկոսով, իսկ դիտարկված խմբում հարկատուներից 17-ը առնվազն կրկնապատկել է հարկային վճարումները: Այստեղ կարելի է նշել հատկապես հանքահումքային, ֆինանսաբանկային, ՏՀՏ, նաև՝ առևտրի ոլորտների առաջատարներին:

Այսպես, Չանգեզուրի ՊՄԿ-ն 2,3 անգամ կամ 81 մլրդ դրամով շատ հարկ է մուծել, նախորդ տարվա համեմատությամբ: Նույն կերպ, Ագարակի ՊՄԿ-ն 3,0 անգամ ավելացրել է հարկային վճարումները (մոտ 13 մլրդ դրամով): Աճի մյուս առաջատարներից կարելի է առանձնացնել հատկապես հետևյալ ընկերությունները՝ «ՄԵԳԱ ԹԻԵՅԴ» (հարկային վճարումները ավելացել են 7,3 մլրդ դրամով կամ 6,3 անգամ), «Թել-Սել» (+3,6 մլրդ դրամ կամ 5,6 անգամ աճ), «ԼԻՃԸՎԱԶ» (+3,5 մլրդ դրամ կամ 4,9 անգամ աճ), «ԴԱՏԱԱՐՏ.ԱՍ» (+2,3 մլրդ դրամ կամ 4,8 անգամ աճ), «ՓՐԻԹԻ





### **Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ**

ՈԻԵՅ» (+6,5 մլրդ դրամ կամ 4,3 անգամ անձ), «ՄՈՐԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ» (+13,2 մլրդ դրամ կամ 4,0 անգամ անձ), «ԼԵՌՆԱՄԵՏԱԼՈՒՐԳԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» (+6,2 մլրդ դրամ կամ 2,9 անգամ անձ), «ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՂԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ (+7,3 մլրդ դրամ կամ 2,8 անգամ անձ), «ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» (+3,7 մլրդ դրամ կամ 2,6 անգամ անձ), «ՄԻԿՄԵՏԱԼ» (+2,4 մլրդ դրամ կամ 2,5 անգամ անձ), «ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ» (+2,9 մլրդ դրամ կամ 2,2 անգամ անձ):

Դիտարկվող ժամանակահատվածում անկման ավելի բարձր մակարդակ արձանագրվել է «ԳԵՈՊՐՈՍԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ընկերությունում (նախորդ տարվա համեմատությամբ հարկային վճարումները նվազել են 17,6 մլրդ դրամով), «ԹԵՂՈՒՏ»-ում (նվազումը՝ 8 մլրդ դրամով), «ՅՈՒԶՈՄ»-ը կրճատել է հարկային վճարումները 3 մլրդ դրամով, «ԱԹԵՆԶ» ընկերությունում նվազումը ևս զգալի է՝ 2,2 մլրդ դրամ, «ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ» ընկերությունը նախորդ տարվա համեմատությամբ հարկային վճարումները կրճատել է 1/3-ով կամ 1,9 մլրդ դրամով:

**Աղյուսակ 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված առանձին ընկերությունների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը, մլրդ դրամներով**



**Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ**

Տեղը ցանկում	Կազմակերպության անվանումը	2021	2022	Տարբերությունը
1	«ՉԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»	62.0	143.9	132
2	«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ»	47.8	52.3	9
3	«ԳՐԱՆԴ ՏՈՐԱԿՈ»	42.2	45.0	7
4	«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ»	20.2	27.4	36
5	«ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆԶԱ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»	6.7	19.6	192
6	«ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ»	12.9	18.1	41
7	«ՄՈՐԱՅԼ ՍԵՆՔՐ ԱՐԹ»	4.4	17.6	299
8	«ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ»	13.2	17.0	29
9	«ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ»	18.1	19.9	10
10	«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ»	15.7	15.9	2
11	«ՖԼԵՇ»	15.5	15.9	3
12	«ԱԼԵՔՍ ԷՆԴ ՅՈԼԴԻՆԳ»	10.5	13.7	30
13	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐՈԿՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ»	8.9	12.9	45
14	«ԹԵՂՈՒՏ»	20.3	12.4	-39
15	«ՄԱՔՍ ՕԻԼ»	9.7	12.0	23
16	«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՂԱՆԱԿԱԿԱՅԱՆՆԵՐ	4.0	11.3	182
17	«ՍԻԹԻ»	8.1	11.1	38
18	«ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ»	8.2	10.8	32
19	«ԼԵՌՆԱՄԵՏԱԼՈՒՐԳԻՎՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ»	3.2	9.4	193
20	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ»	7.5	8.8	17
21	«ՄԵԳԱ ԹԵՅԴ»	1.4	8.8	527
22	«ՓՐԻԹԻ ՈՒԵՅ»	2.0	8.5	326
23	«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈԿՐԱԿԱՆ»	5.2	8.5	63
24	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	8.9	8.2	-8
25	«ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՅԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ»	7.0	8.0	14
26	«ՅՈՒԲՈՄ»	10.9	7.9	-28
27	«ՕՆԻՐԱ ՔԼԱԲ»	-	7.6	Նախորդ տարի բացակայել է
28	ԱԿԲԱ ԲԱՆԿ	5.6	7.4	32
29	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ	3.7	7.3	98
30	«ԿԱԲԱՐԿՈ»	4.0	7.3	82
31	«ԱԿՏՈՆԵՐԿՐՈՂՆԵՐ»	-	7.3	Նախորդ տարի բացակայել է
32	«ԲԱՂՐԱՄՅԱՆ»	5.7	7.1	24
33	«ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ»	6.0	7.0	17
34	«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»	5.6	6.7	20
35	«ԱՎԵՐՍ»	6.6	6.1	-7
36	«ԴԵԿՈՐԱ-ԳՐՈՒՊ»	5.0	6.0	20
37	«ՉԱՐԱՏ ԿԱՊԱՆ»	6.7	6.0	-11
38	«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ»	2.3	6.0	160
39	«ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ»	4.2	5.9	40
40	«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ»	5.3	5.8	9
41	«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ»	4.8	5.6	17
42	«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ»	4.8	5.6	17
43	«ԴԻՋԻԹԵՅՆ»	3.9	5.6	43



**Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ**

44	«ՄՈՂՈՒՄ ԳՐԱՆՈՒՄ»	3.9	5.5	42
45	«ԲԱՐՍԻՍ»	4.8	5.5	15
46	«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՏՐԱՆՍԳԱԶ»	5.5	5.4	-2
47	«ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ»	2.4	5.3	123
48	«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ»	4.0	5.3	32
49	«ՍԱՍ-ԳՐՈՒՊ»	4.1	5.3	28
50	ԻՆԵԿՈԲԱՆԿ	5.3	5.2	-1
51	«ԱՆԴԱԿՈ»	3.6	5.1	43
52	ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ	4.5	4.9	10
53	«ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ»	4.7	4.9	4
54	«ՅՈՒԷՍԷՅ ԱՎՏՈԷՔՍՊՈՐՏ ԲՍԵ»	-	4.8	Նախորդ տարի բացակայել է
55	«ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՁՈՒՐ»	3.9	4.8	23
56	«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ»	3.9	4.7	20
57	«ՍԱԿՎ ԳՐՈՒՊ»	3.9	4.6	18
58	«ՍՊԱՅԿԱ»	2.2	4.6	109
59	«ԱԴԱՄԻՈՒՄ»	3.8	4.6	20
60	«ՍԻՆՈՓՍԻՍ ԱՐՄԵՆԻԱ»	3.9	4.5	15
61	«ԹԵԼ-ՍԵԼ»	0.8	4.4	455
62	«ՑԵՊԵԼԻՆ ԱՐՄԵՆԻԱ»	3.6	4.4	22
63	«ԼԻՃՔՎԱԶ»	0.9	4.4	386
64	«ԱԳ ԻՄՊԵՔՍ»	3.6	4.1	15
65	«ԴԻՍԹՐԻԲՄԵՔՍ»	3.9	4.1	6
66	«ՊԻԿՍԱՐՏ»	2.8	4.1	46
67	«ՄԻԿՄԵՏԱԼ»	1.6	4.0	151
68	«ԱՎԱՆԳԱՐԴ ՄՈԹՈՐՍ»	2.7	4.0	48
69	«ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼ ՀԻՂՐՈ ԿԱՍԿԱԴ»	2.7	4.0	47
70	«ԱԹԵՆՔ»	6.2	3.9	-36
71	«ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ»	5.8	3.9	-32
72	«ԴԵՐԺԱՎԱ-Ս»	3.1	3.9	26
73	ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	2.5	3.9	55
74	«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ»	3.9	3.8	-3
75	«ԱԽԹԱԼԱՅԻ ԼԵՌՆԱՀԱՐՍԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ»	1.6	3.8	135
76	«ՎԱԳԱ-ՖԱՐՄ»	4.0	3.7	-6
77	«ԷԼՔՈՐ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ»	2.4	3.7	54
78	«ԷՊԱՄ ՍԻՍԹԵՄՉ»	1.3	3.6	180
79	«ԱՐՊԱՆԻՎ»	3.5	3.6	4
80	ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ	3.6	3.5	-3
81	«ԼԻԱ-Կ ԳՐՈՒՊ»	3.0	3.4	14
82	«ԱՌԳԵ ԲԻՉՆԵՍ»	3.4	3.4	1
83	ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ	3.0	3.4	13
84	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	3.8	3.3	-14
85	«ՍՊՍ ՍԻԳԱՐՈՆ»	2.3	3.3	42
86	«ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ»	20.8	3.2	-85
87	«ԱԺԴԱՆԱԿ»	2.6	3.2	22



**Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ**

88	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»	3.1	3.1	1
89	«ԴԻ-ԴԻ-ԹՐԵՅԴ»	2.3	3.0	31
90	«ԶԻԳՉԱԳ»	2.2	3.0	37
91	«ԷՂԵԼԿԵՅՍ ԿԱ»	-	3.0	Նախորդ տարի բացակայել է
92	«ԱՐՄԵՆ-ՀԱՄԻԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ ՀԶ»	3.0	3.0	-1
93	«ԷՐԵՐՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»	2.4	3.0	24
94	«ԿԱՐՈՒԼԻՆԱ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ»	1.4	3.0	112
95	«ԴԱՏԱԱՐՏ.ԱՄ»	0.6	2.9	384
97	«ԼԻՄՈՆ ԳՐՈՒՊ»	3.6	2.9	-20
98	«ՊԵՌՆՈ ՌԻԿԱՐ ԱՐՄԵՆԻԱ»	2.2	2.9	30
99	«ԱՐԿԱԹ»	-	2.9	Նախորդ տարի բացակայել է
100	«ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ»	2.4	2.8	17
101	«ՊՈՈՇՅԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԵԱՐԱՆ»	2.3	2.8	20

**Ամփոփում**

1000 հարկատուների ցանկում ներառված կազմակերպությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը 2022թ. հունվար-դեկտեմբերի արդյունքներով, նախորդ տարվա համեմատությամբ ծավալային և կառուցվածքային ուշագրավ փոփոխություններ է արձանագրել.

- ✓ վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է շուրջ 1,5 տրլն դրամ, ինչը 32%-ով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, 2022թ. մակարդակն անհամեմատ բարձր է ոչ միայն 2021թ., այլ նաև դրան նախորդող, այդ թվում՝ տնտեսական առումով առավել բարենպաստ կամ մինչճգնաժամային համարվող ժամանակահատվածի նկատմամբ,
- ✓ շուրջ 210 մլրդ դրամով կամ 32 տոկոսով ավելացել է հարկային վճարումների ընդհանուր ծավալը 100 խոշոր հարկատուների պարագայում,
- ✓ 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել 374 մլրդ դրամ հարկ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ ավելի է շուրջ 98 մլրդ դրամով,
- ✓ ցանկի վերջին հարյուրակում գտնվող հարկատուների վճարումները կազմել են շուրջ 28 մլրդ դրամ 2021-ի համեմատ 10 մլրդ դրամով ավելի,
- ✓ 1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը կազմել է 32 անգամ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ էականորեն ցածր է,
- ✓ 2022թ. արդյունքներով՝



## Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ

- ✚ ՀՀ-ում գործող 258 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2021-ին այդպիսի հարկատուների թիվը 201 էր, 2020-ին՝ 177, իսկ դրան նախորդող տարիներին՝ էլ ավելի քիչ,
  - ✚ 500 մլն դրամից ավելի հարկեր վճարած ընկերությունների թիվը 543 է (2021-ին՝ 409),
  - ✚ 1000 խոշոր հարկատուների ցանկում 200 մլն դրամից պակաս հարկ վճարած ընկերություններչկան (2021-ին այդպիսիք 142-ն էին, 2020-ին՝ մոտ 200),
  - ✚ 160 ընկերության վճարած շահութահարկի մեծությունը գերազանցել է 200 մլն դրամը (նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 97 էր, իսկ օրինակ 2020-ին՝ 116),
  - ✚ 280 հարկատու գերազանցել է եկամտային հարկի՝ 200 մլն դրամի շեմը (2021-ին՝ 235),
  - ✚ 1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունների հարկային վճարումների ընդհանուր մեծության 25,8%-ը ուղղակի հարկերն են ինչը ցածր է նախորդ մի քանի տարիների մակարդակից: 1000 հարկատուների պարագայում նույն ցուցանիշը 2022-ին 28,7% է, ինչը բարձր է 2021-ի մակարդակից (23,6%),
  - ✚ 200 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 409 ընկերություններ (2021-ին՝ 347, 2020-ին՝ 308):
- ✓ Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2022-ի արդյունքներով վճարել է 8,8 մլրդ դրամի հարկ (2021-ին՝ 6,7 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 1,1 մլրդ դրամ (2021-ին՝ 711 մլն դրամ), եկամտային հարկը՝ 1,16 մլրդ դրամ (2021-ին՝ մոտ 1,1 մլրդ դրամ), ԱԱՀ-ն՝ 3,4 մլրդ դրամ (2021-ին՝ 2,7 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 970 մլն դրամ (2021-ին՝ 820 մլն դրամ):
  - ✓ Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2022թ. 12 ամիսների արդյունքներով վճարել է մոտ 280 մլն դրամի հարկ (2021-ին՝ 170 մլն դրամ), եկամտային հարկը՝ 78 մլն դրամ (2021-ին՝ 56 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 123 մլն դրամ (2021-ին՝ 68 մլն դրամ):
  - ✓ Երևանում գրանցված հարկատուների թիվը ցանկում ներառվածների 81%-ն է, ինչը նախորդ տարիների համեմատությամբ փոքր-ինչ ավելացել է: Մինչդեռ նրանց մասնաբաժինը վճարած հարկերի ընդհանուր ծավալում 2022-ին կազմել է 74,8%, ինչը նկատելիորեն ցածր է նախորդ տարիների մակարդակից



## Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ

- ✓ Խոշոր հարկատուների ցանկում վերին հորիզոնականներ զբաղեցրած (հիմնականում՝ առաջին հարյուրյակի) ընկերությունների շուրջ 80%-ը նախորդ տարվա համեմատությամբ ավելացրել է վճարած հարկերի մեծությունը: Առավել խոշորների շուրջ 60%-ը նախորդ տարվա համեմատությամբ հարկային վճարումների ծավալն ավելացրել է 20 և ավելի տոկոսով, իսկ դիտարկված խմբում հարկատուներից 17-ը առնվազն կրկնապատկել է հարկային վճարումները: Այստեղ կարելի է նշել հատկապես հանքահումքային, ֆինանսաբանկային, ՏՀՏ, նաև՝ առևտրի ոլորտների:
- ✓ Չանգեզուրի ՊՄԿ-ն 2,3 անգամ կամ 81 մլրդ դրամով շատ հարկ է մուծել, նախորդ տարվա համեմատությամբ: Նույն կերպ, Ագարակի ՊՄԿ-ն 3,0 անգամ ավելացրել է հարկային վճարումները (մոտ 13 մլրդ դրամով): Աճի մյուս առաջատարներից կարելի է առանձնացնել հատկապես հետևյալ ընկերությունները՝ «ՄԵԳԱ ԹՐԵՅԴ» (հարկային վճարումները ավելացել են 7,3 մլրդ դրամով կամ 6,3 անգամ), «ԹԵԼ-ՍԵԼ» (+3,6 մլրդ դրամ կամ 5,6 անգամ աճ), «ԼԻԾԶՎԱԶ» (+3,5 մլրդ դրամ կամ 4,9 անգամ աճ), «ԴԱՏԱԱՐՏ.ԱՄ» (+2,3 մլրդ դրամ կամ 4,8 անգամ աճ), «ՓՐԻԹԻ ՈՒԷՅ» (+6,5 մլրդ դրամ կամ 4,3 անգամ աճ), «ՍՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ» (+13,2 մլրդ դրամ կամ 4,0 անգամ աճ), «ԼԵՈՆԱՄԵՏԱԼՈՒՐԳԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» (+6,2 մլրդ դրամ կամ 2,9 անգամ աճ), «ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ (+7,3 մլրդ դրամ կամ 2,8 անգամ աճ), «ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» (+3,7 մլրդ դրամ կամ 2,6 անգամ աճ), «ՄԻԿՍԵՏԱԼ» (+2,4 մլրդ դրամ կամ 2,5 անգամ աճ), «ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ» (+2,9 մլրդ դրամ կամ 2,2 անգամ աճ):
- ✓ 2022թ. անկման ավելի բարձր մակարդակ արձանագրվել է «ԳԵՈՊՐՈՍԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ընկերությունում (նախորդ տարվա համեմատությամբ հարկային վճարումները նվազել են 17,6 մլրդ դրամով), «ԹԵՂՈՒՏ»-ում (նվազումը՝ 8 մլրդ դրամով), «ՅՈՒԲՈՄ»-ը կրճատել է հարկային վճարումները 3 մլրդ դրամով, «ԱԹԵՆԶ» ընկերությունում նվազումը ևս զգալի է՝ 2,2 մլրդ դրամ, «ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ» ընկերությունը նախորդ տարվա համեմատությամբ հարկային վճարումները կրճատել է 1/3-ով կամ 1,9 մլրդ դրամով: